ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 50-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ին, ժամը 15.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)
5. Տիգրան Ալբերտի Պապոյանին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)
6. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխումները հաստատելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 10
ք. Ալավերդի